

ՏԷՐ ԶՕՐԻ Ս.ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՕԾՈՒՄԸ ԱՌԻԹ՝ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՄԱՆ

Այն պահուն, երբ Գետաշէնի Տէջ հակահայ բռնութիւնները կը շարունակին, Մայիս 5ը պատճառական օր ճը եղաւ հայութեան համար:

Արդարեւ, Տէր Զօրի Ս.Նահատակաց եկեղեցւոյ օծումը առիթ ճը եղաւ հայութեան՝ պահանջատիրական իր վճռակամութիւնը վերանորոգելու հայութեան բռնադատեալ իրաւունքներու նկատմամբ եւ շեշտելու Հայ Դատի մէկ ու ամբողջական ըլլալու իրականութիւնը:

Շաբաթ երեկոյեան ժամը 9.00ին Տէր Զօրի Ս. Նահատակաց յուշահամալիրին մէջ տեղի ունեցաւ «Նաւակատիք»ի արարողութիւն, որու ընթացքին Գարեգին Բ. Կաթողիկոսին կողմէ բացուեց կատարուեցաւ նորակառոյց յուշահամալիրի ծառան:

Կիրակի, 5 Մայիսի առաւօտեան կանուխ ժամերէն սկսեալ Սուրիոյ եւ Կիրանանի զանազան շրջաններէն աւելի քան 5000 հայորդիներ անհատական թէ միութիւնների միջոցով ժամանեցին Տէր Զօր, ներկայ գտնուելու օծման հանդիսաւոր արարողութեան:

Օծման արարողութիւնը սկսաւ առաւօտեան ժամը 9.00ին: Զայն գլխաւորեց եւ Ս.Պատարագը ծառուցեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին 2րդ Վեհափառը, մասնակցութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան պատուիրակութեան եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմակալ առաջնորդներու:

Պաշտօնական հիւրերու շարքին էին պատւիրակութիւն ճը՝ գլխաւորութեամբ Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի Նախագահ Հրաչիկ Սիմոնեանի, ինչպէս նաեւ տեղական հայ համայնքներու համայնքապետերն ու ազգային իշխանութեան մարմիններու ներկայացուցիչներ:

Պատարագէն ետք եկեղեցական թափօրը ուղղուեցաւ Նահատակաց յուշարձանը, ուր Բերիոյ թեմի առաջնորդ Սուրէն Արք. Քաթարոյեան անդրադարձաւ յուշահամալիրի նուիրական հաստատութիւն ճը ըլլալու հանգամանքին, որ Եղեռնի նահատակների սուրբ եւ նուիրական պատգամները պիտի փոխանցէ հետագայ սերունդներուն:

Իր խօսքի աւարտին, Սրբազան հայրը ողջոյնի խօսք ուղղեց Վազգէն Ա. Վեհափառ հօր, Գարեգին Բ. Կաթողիկոսին, երկրի նախագահ Հաֆէզ Ասատին եւ յուշահամալիրի կառուցման իրենց նպաստը բերող հայորդիներուն:

Ապա ան հրաւիրեց Վազգէն Ա. Վեհափառ հօր ներկայացուցիչ Գիւտ Արք. Նաբբաշեանը, փոխանցելու այս առիթի Վեհափառ հօր զրաւոր պատգամը:

Վազգէն Ա. Վեհափառը հայութեան դէմ գործուած ցեղասպանութիւնը նկատելով «համամարդկային ողբերգութիւն», այս օրը նկատեց համայն հայութեան համար խոկումի օր եւ արտերկրի ու հայրենիքի կապերու ամրապնդման կարեւոր ազդակ: Խօսքի աւարտին Վեհափառ հայրը կոչ կ'ուղղէր հայութեան բոլոր զաւակներուն անխտիր տէր կանգնելու իրենց բաժին ինկած ազգանուէր պարտաւորութիւններուն:

Հուսկ, Գարեգին Բ. Վեհափառը ուղղեց իր հայրապետական սրտագամը: Ան իր խօսքին մէջ վեր առաւ նահատակութեան սրբազան թելադրանքը եւ ընդգծեց, որ Տէր Զօրը զաղբած է այլեւս շիրմաքաղաք ըլլալէ, այլ անիկա ամենօրեայ ներշնչարան է բոլորիս:

Գետաշէնի մէջ հայութեան դէմ գործուած նորագոյն ցեղասպանութեան մասին խօսելով, Վեհափառը շեշտեց, որ հայ ժողովուրդի բոլոր խաւերու մասնակցութեամբ պարտաւոր ենք տէր կանգնիլ մեր իրաւունքներուն: Մէկ հայութիւն կերտելու հրամայականով, ան կոչ ուղղեց ներքին հոգեկան հզօրացման, զոհողութեան եւ ծրագրեալ ու համերաշխ գործունէութեան: Վեհափառը հրաւիրեց ողջ հայութիւնը այսուհետեւ սոյն յուշարձանը նկատելու համահայկական սրբատեղի:

Իր պատգամի աւարտին Վեհափառը ողջոյնի խօսք ուղղեց Վազգէն Ա. Վեհափառին, Սուրիոյ նախագահին եւ Բերիոյ թեմի ազգային իշխանութեան մարմիններուն:

Հանդիսութիւնը փակուեցաւ «Կիլիկիա» եւ «Սարգարապատ» երգերու կատարողութեամբ: